ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2022/16, 02.02.2022թ.

Բողոք բերող անձ՝ «Ֆոտոն» ՍՊԸ

Պատվիրատու՝ «Արամ Մանուկյանի անվան մարզառազմական մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ԱՄՄՄԴ-ԳՀԱՊՁԲ-(2022/2-Ս)»

Գնման առարկան՝ սննդամթերքի ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել «ԱՄՄՄԴ-ԳՀԱՊՁԲ-(2022/2-Ս)» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաթեթը կամ չկայացած հայտարարել «ԱՄՄՄԴ-ԳՀԱՊՁԲ-(2022/2-Ս)» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման

ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻՆ

Հասցե՝ Երևան, Մելիք-Ադամյան 1 /ՀՀ ֆինանսների նախարարություն/

Բողոք բերող ընկերություն՝ «ՖՈՏՈՆ» ՍՊԸ

Հասցե՝ ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Վ. Սարգսյանի փ., շենք14. բն.21

e-mail: ms.foton2014@mail.ru

Պատվիրատու՝ «ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՐԶԱՌԱՋՄԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նուբարաշեն 6/2

Գնման ընթացակարգի՝

Ծածկագիր՝ ԱՄՄՄԴ-ԳՀԱՊՁԲ-(2022/2-Ս)02

Գնման առարկա՝ սննդամթերքի ձեռքբերում

ԲՈՂՈՔ

«ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՐԶԱՌԱՋՄԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ -ի կարիքների համար՝ սննդամթերքի ձեռքբերման համար 27.01.2022թ.-ին հրապարակվել է ԱՄՄՄԴ-ԳՀԱՊՁԲ-(2022/2-Ս)02 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

27 հունվարի 2022թ. մինչև ժամը 14.00 –ն *«ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ի* կողմից ներկայացված հայտի փաթեթը գնահատող հանձնաժողովի կողմից չի ընդունվել հիմք ընդունելով այն փաստը, որ ներկայացված փաթեթի ծրարի վրա եղել է ընկերության տնօրենի ֆաքսիմիլային ստորագրությունը(իսկ ծրարի մեջ եղել են տնօրենի կողմից կնքված և ստորագրված հայտի բնօրինակ տարբերակները):

Պատվիրատուի կողմից չընդունվելով «ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով և 34-րդ հոդվածով սահմանված պահանջները:

Վերոգրյալով պայմանավորված՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք՝

Պարտավորեցնել ԱՄՄՄԴ-ԳՀԱՊՁԲ-(2022/2-Ս)02 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել *«ՖՈՏՈՆ» ՍՊԸ -ի կողմից ներկայացված հայտի փաթեթը կամ չեղյալ հայտարարել* ԱՄՄՄԴ-ԳՀԱՊՁԲ-(2022/2-Ս)02 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը:

Կից ներկայացվում է.

1. Բողոքի ներկայացման համար նախատեսված վճարման անդորրագրի պատճենը:

2. Ընկերության տնօրենի անձը հաստատող փաստաթղթի և պետռեգիստրի վկայականի պատճենները:

3. ԱՄՄՄԴ-ԳՀԱՊՁԲ-(2022/2-Ս)02 ծածկագրով գնանշման հարցման ներկայացված հայտի ծրարը:

ՖՈՏՈՆ ՍՊԸ տնօրեն՝ ՆԵԼԼԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱԼԱՏԱ ՓԱԿԱԳԻՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ОБЩЕСТВО С ОГРАНИЧЕННОЙ ОТВЕТСТВЕННОСТЬЮ
LIMITED LIABILITY COMPANY
"ՖՈՏՈՆ"
"ФОТОН"
"FOTON"
90036001
ՀՀ ԿԱՊԱՆ ՇԵՐԵՄԻ 1/4